№ 126 ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 14 1902 ՈՒՐԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 14 № 126

ԵՐԵՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կարելի է բարեկարգել.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անբուժելի չարիք. Մօսկվայի հայերի վարք ու բարքից. Նամակ Շուլաւէրից. Նամակ Օղեսայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ազատ ժամեր։

ԿԱՐԵԼԻ Է ԲԱՐԵԿԱՐԳԵԼ

—

Ամառվայ շոգերը քշեցին տափարակում գտնվող քաղաքացիներին դէպի լեռնային տեղերը, դէպի ամարանոցները։ Այն տեղերը, ուր գնում է քաղաքացին, բազմաթիւ են. բայց ամարանոցների շատ փոքր մասը ունի յարմարութիւններ թէ վայելուչ ապրելու և թէ զբօսանքների համար։ Նրանց մեծամասնութիւնը ամենևին չէ յարմարեցրած ամարանոցականների կեանքին և պահանջներին և պատճառում է մի շարք զրկանքներ, որոնց տանում է քաղաքացին միայն զով օդի մէջ ապրելու համար։

Մենք աւելի ենք ունեցել խօսելու այն բարեկարգութիւնների մասին, որոնք կարող էին մտցնվել մեր լեռնային շատ գիւղերում՝ նրանցից յարմար ամարանոցներ շինելու եկեղեցիների համար։ Այդ բարեկարգութիւններից կօգվէր նախ և առաջ գիւղը, որ աւելի հաճելի տեսք կընդունէր, կը շահվէր նրա ազգաբնակութիւնը՝ վարձու տալով իր շինած բնակարանները և վաճառահանելով իր գիւղատնտեսական մթերքները, վերջապէս գոհ կը մնար ամարանոցի հիւրը և հաճոյք կը զգար յետագայ տարիներն էլ այցելելու նոյն տեղերը։

Բացի մի քանի նշանաւոր տեղերից, ինչպէս են Կօջորը, Բօրժոմը, Աբաստումանը, մնացածները մեծ մասամբ զուրկ են անհրաժեշտ պայմաններից փոքր ի շատէ վայելուչ կեանք վարելու համար ամառվայ երկու երեք ամիսների ընթացքում։ Դէպի Կարս և Երևան գնացող երկաթուղու գծի ուղղութեամբ շատ տեղեր կարող են աջող ամարանոցներ դառնալ, եթէ միայն ստեղծվեն կենցաղավարութեան համար նպաստաւոր պայմաններ և զբօսանքներ կատարելու համար որոշ դիւրութիւններ։ Շատ տեղերում տները շինված են անճոռնի կերպով, առանց կանոնաւոր դասաւորելու սենեակները և առանց անհրաժեշտ յարմարութիւնների. տների սառաջ չը կան պարտէզներ կամ բաց տարածութիւն, փողոցները նեղ են, փոշոտ, խոնաւ ժամանակ չափազանց ցեխոտ, չեն շինված ուղիներ, շաւիղներ և ճանապարհներ դէպի անտառի խորքերը։

Այդ անհոգութեան պատճառով գեղեցիկ լեռնային տեղեր, որոնք կարող էին այն դերը կատարել, ինչ որ շվեյցարական լեռնանիստ գիւղերը, մնում են բոլորովին առանց ուշադրութեան քաղաքացիների կողմից, որովհետև զուրկ են այն պայմաններից, որոնք ախորժելի են դարձնում կեանքը ամարանոց գնացողի համար։ Ցաւալի է, որ նոյն իսկ մի այսպիսի ձեռնարկութեան մէջ, որ կարող է անմիջական օգուտներ տալ գիւղերին, չէ երևում նախաձեռնող ոգի և ինքնագործունէութեան ոյժ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԲՈՒԺԵԼԻ ՉԱՐԻՔ

—

Դա բամբասանքն է, որը քանի գնում, աւելի մեծ ծաւալներ է ստանում մեր հասարակութեան շատ խաւերում։ Չարիք, որ ոչ ուսումնասիրված է, ոչ վնասակար, վտանգաւոր համարված եւ ոչ էլ ենթակայ որ եւ է բժշկութեան։ Եւ որքան մեծ ծաւալ է ստանում այդ կլասիքական բամբասանքը, նոյնքան խաւարում, սքողվում է հասարակական իսկական կարծիքը եւ, ընդհակառակը, որքան նուազում, կենդանութիւնից զրկվում է հասարակական կարծիքը, այնքան աւելի երես է առնում եւ թագաւորում բամբասանքը, պառաւական այդ անպատուաբեր զբաղմունքը, որը այժմ զբաղեցնող է նաեւ շատ ուշ-պառաւների եւ ուշ խաւարների համար, ինչպէս ընդունված է ասել բամբասանքի մասին։

Իրաւ, երբ մարդ լուրջ ուշադրութիւն է դարձնում այն բանին, երբ, ինչպէս ասում են, գլուխ է գնում այդ բոլորին, մի այնպիսի անդունդ է բացվում առջեւ, որից կը սարսափի նոյն իսկ ինքը, Սաթայէլը։ Երբ տեսնում ես, ինչպէս մարդիկ, թողած իրանց սեփական գործերը, մոռացած իրանց կարիքները, պակասութիւնները, քննադատելով, սրան պախարակելով, խաչ հանելով, նրան հարստացնելով, եթէ աղքատ է եւ, ընդհակառակը, աղքատացնելով, եթէ հարուստ է, նրան վերագրելով չեղած պակասութիւններ եւ խլելով սրանից չունեցած արժանաւորութիւնները,—ասում ենք, երբ ամեն օր, ամեն ժամ մարդ ականատես է լինում այդպիսի երեւոյթների, կասկած է ծագում. արդեօք այդ մարդկանց ուղեղը խանգարված չէ։ Եւ միթէ լուրջ, խելքի տէր մարդը կարող է տարվել այդպիսի մի յիմար սովորութեան, ինչպիսին է բամբասանքը։ Հարիւրաւոր եւ հազարաւոր վերստեր կայծակի արագութեամբ հասնում է նոյն բամբասանքը եւ, ծամոնի նման բերնէ-բերան անցնելով, ենթարկվում է մի շարք վերլուծման։

Սպիտակ ստրկուհիներից մէկը պատմում էր. կտրված լինելով աշխարհից, անտեղեակ դրսի եղելութիւններին, մեր երեւակայութեան մէջ պատկերացնում էինք դէմքեր եւ դէպքեր ու ահագին պատմութիւն չինում դրանցից։ Եւ մի առանձին բաւականութիւն էինք գտնում այդ բանում. չէ որ դա մի անմեղ խաղ էր, մենք ընդմիշտ զրկված էինք իրականութեան արեգակի ջերմութիւնից եւ, բացի այդ, մենք պարապ էինք բառի բուն նշանակութեամբ։ Ահա դահլիճ է մտնում բոլորիս անծանօթ մի պարոն. մեզնից չարաճճիներս անմիջապէս դրա վրա մի պատմութիւն էինք սարքում ու յայտնում միւս ընկերուհիներին։ Մի քանի րոպէից յետոյ այդ պարոնը կամ բոլորին սիրելի էր երեւում կամ թէ չէ ատելի—այդ մեզնից էր կախված։ Իմ հարցին, մեծ մասամբ սիրելի էին լինում դրանք թէ ատելի,—նա պատասխանեց ատելի...

Ես սարսափում եմ այսպիսի համեմատութիւնից, բայց չեմ սարսափում հրապարակով յայտնելու, որ դա շատ նման է մեր բամբասաէր ամբոխին։ Բայց այն, ինչ որ թոյլատրելի, ներելի եւ յատուկ է անառակատներին, նա չէ կարող ներելի լինել մի հասարակութեան, որը անթիւ առիթներ եւ միջոցներ ունի իր շրջանը, իր բնակավայրը հասարակացնելուց աւելի լաւ բան դարձնելու։ Ի՞նչքան բերաններ են մաչվում, չախ-չախ դառնում՝ բամբասանքներ հիւսելիս, ինչքան ուղեղներ են վնասվում՝ բամբասանք անելու համար նիւթեր գտնելիս, որքան գեղեցիկ դէմքեր են այլանդակվում՝ բամբասանքի առաջացրած նախանձի, ներքին կրակի, անբացատրելի վրիժառութեան ազդեցութեան տակ... Վատ հայհոյանքներ գործածող երեխայի լեզուի վրա կարմիր պղպէղ են ցանում, անհանգիստ անելիս երեխայի ձեռքն են ծակում, երբ կամենում են, որ այդ ձեռքը նա չարութեան գէնք չը դարձնէ։ Ի՞նչ միջոց կայ պոռնիկներին վայել այդ արարմունքը արմատախիլ անելու—ոչ մի։ Միակ գործնական միջոցը մինչեւ այժմ եղել է արհամարհանքը եւ լռութիւնը։ Եւ քանի որ դեռ չեն ստեղծվել ուրիշ միջոցներ, պէտք է օգտվել այդ եղանակներից միայն. լռել, անուշադրութեան մատնել, կատարեալ արհամարհանքի արժանացնել բոլոր նրանց, որոնք իրանց ամօթաբեր մերկութիւնը թողած ուրիշի հագուստի ձեւերով են զբաղված։ Այո, դա միակ միջոցն է։

Ռ. Յովհաննէսեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԶԱՏ ԺԱՄԵՐ

—

Մանկական պարտէզ

Մինչեւ 7—8 տարեկան հասակը երեխան ապրելով տանը անց է կացնում միակերպ, դատարկ եւ պարապ կեանք։

Երեխան չունի դաստիարակ, չունի ուղեցոյց, չունի ընկերներ։ Եղբօր կամ քրոջ ընկերութիւնը, միշտ մի եւ նոյն նիստ ու կացը չէ յագեցնում, ձանձրացնում է նրան։

Անողոք բնութիւնն էլ ժամ առ ժամ, օր ըստ օրէ, զարթնելով երեխայի մէջ՝ առաջ է բերում բարոյական, մտաւոր եւ ֆիզիքական հազար ու մի տեսակ պահանջներ, որոնց բաւարարութիւն տալու անձեռնհաս է եւ անկարող ընտանիքը։

Հայրը զբաղված է իր անձնական գործերով, մայրը՝ տնտեսութեամբ։

Ինքն իրան թողնված՝—խօսքս ի հարկէ, հացի, հագուստի եւ այլ նման պիտոյքների մասին չէ—երեխան աճում է, ինչպէս վայրենի բանջար։ Նա պարապ է եւ տխուր։ Նա տանջվում է եւ տանջում։ Եւ հետզհետէ դառնում է նա «չար», ծոյլ, ստախօս, քմահաճոյ, դիւրագրգիռ, հակամիտ դէպի այն ամեն ախտերը, որոնք արգասիք են պարապութեան եւ որոնցից շատերը արմատանալով երեխայի մէջ՝ զբաղում են նրա հետ մինչեւ գերեզման։

Երեխան ծնվում է ոչ բարի, իբրեւ դառն, ոչ չար, իբրեւ գայլ։ Նա ծնվում է բանական կենդանի։ Մեզանից կախված է շինել նրանից կամ բարի եւ պիտանի մարդ, կամ չար եւ անպիտան գազան։

Նրան պէտք է կրթել։

Երեխայի ամենամերձ եւ առաջին կրթողն ու դաստիարակը մայրն է։ Տարաբաղդաբար՝ մենք էլ կրթված մայրեր շատ չունենք. իսկ երեխաներ... որքան կամենաք։

Այսպէս թէ այնպէս՝ երեխային կրթութիւն եւ ուսում տալը անհրաժեշտ է եւ սուրբ պարտք։

Ոչ մի յանցանք, ոչ մի մեղք այնչափ մեծ չէ եւ դատապարտելի, որչափ ծնողական պարտականացութիւնը զաւակների վերաբերմամբ։

Աշխարհը այնչափ չէ տուժել ժանտախտից, սովից, համաճարակից, որչափ անկիրթ եւ փուչ մարդկանցից։

Անկիրթ, անուսում մեծացող երեխայի ծնողները, մանաւանդ հայրը, աններելի յանցաւոր են թէ՛ ընտանիքի առաջ, թէ՛ շրջապատող հասարակութեան, թէ՛ ազգի եւ թէ՛ ամբողջ մարդկութեան առաջ։

Հետեւապէս՝ պէտք է, անպայման պէտք է կրթել, ուսում-արհեստ տալ երեխային։

Ո՛վ պիտի լինի այժմ այդ ամենը անողը։

Դպրոցը, յայտնի բան է. քանի որ, ինչպէս ասացինք, ընտանիքը զուրկ է հնարաւորութիւնից։

Բայց դպրոցը, ամենքս գիտենք, ութ տարկանից փոքր երեխայ չէ ընդունում իր պատերի մէջ։

Ի՞նչ անել հապա։

Ով կարողութիւն ունի՝ վարձում է դայեակներ, դաստիարակներ (գուվերնեօր) եւ նրանց յանձնում իր զաւակի սկզբնական կրթութիւնը. ասել է՝ նրա ամբողջ կեանքը։

Ով կարողութիւն չունի, կամ փողը աւելի բարձր է դասում քան զաւակի կրթութիւնը,—սրանց թիւը, տարաբաղդաբար, շատ մեծ է—թողնում է իր երեխային, մինչեւ դպրոցական հասակը, ճակատագրի կամքին։

Ով չքաւոր է եւ աղքատ, նրանց մասին ոչինչ չունեմ ասելու, բացի այն, որ պէտք է նրանց օգնել նիւթապէս, օգնել միշտ եւ անդադար։

Առաջին դէպքում, այսինքն, երբ երեխայի կրթութիւնը յանձնվում է վարձկան դայեակների եւ դաստիարակների, ցանկացած եւ ակընկալված նպատակը չէ իրականանում, որովհետեւ նրանց մեծ մասը, իբրեւ փողոցի եւ բուլվարի արտադրութիւններ, հէնց իրանք մեծ կարիք ունեն կրթվելու եւ մի բանի պիտանի դառնալու։ Այս մէկ։ Երկրորդ՝ որովհետեւ նրանց մենք անդադար փոփոխում ենք հազար ու մէկ պատճառներով։

Հետեւանքը լինում է այն, որ մեր երեխաները ոչ միայն չեն կրթվում, այլ աւելի եւս փչանում են։

Այս բոլորը պարզ է, ճիշդ է, կասէք դուք եւ նորից կը հարցնէք. ինչ անել վերջապէս։

Տարիներ առաջ շատ դժուար կը լինէր այս հարցին գոհացուցիչ պատասխան տալ, իսկ այժմ, կարծում եմ, հեշտ է.

Մինչեւ չորս տարեկան հասակը զոհեցէք ձեր երեխային ձեր բոլոր՝ որքան ունէք՝ գիտութիւնը, ձեր ժամանակը, ձեր անձնական զուարճութիւնը եւ... ուրիշ ոչինչ։ Այնուհետեւ, այսինքն չորս տարեկանից սկսած, ձեր երեխան յանձնեցէք մանկական պարտէզ կոչված կրթարանին։ Եւ դուք ձեր պարտքի կէսից աւելի մեծ մասը կատարած կը լինէք։

Մանկական պարտէզի մասին զանազան կարծիքներ եւ, ինչպէս կը տեսնէք, սխալ գաղափար ունեն մեր ընտանիքները։

Շատերը կարծում են, որ մանկական պարտէզը մի մեծ այգի է կամ բանջարանոց, որտեղ հաւաքվում են երեխաները եւ օրական 3—4 ժամ խաղում, առանց որ եւ է բան սովորելու, որովհետեւ... մէջտեղ գիրք չը կայ։ Եւ այսպէս՝ երեք-չորս տարի։

Ոմանք էլ կարծում են, որ մանկական պարտէզը անուս եւ չքաւոր ընտանիքների համար է, այլ ոչ ինտելիգենտ եւ հարուստ դասակարգի համար։ Ինտելիգենտ ընտանիքի մէջ, ասում են նրանք, երեխան միշտ չփվելով իր ծընողների, իր ուսանող եղբօր կամ քրոջ հետ, շատ բան է սովորում ինքն իրան, որ ինտելիգենտ ընտանիքների երեխաները միջոց ունեն յաճախ տեսնվել միմեանց հետ, հաւաքվել մի անգամ այս ծանօթի տանը, միւս անգամ մի ուրիշ բարեկամի մօտ, եւ միասին ժամանակ անցկացնելով զարգանալ։

Եւ այլն։

Առաջինների կարծիքը, իբրեւ գործից տեղեկութիւն չունեցողների անմեղ կարծիք, մենք կարելի ենք համարում թողնել ու այնպէս անցնել։

Զենք կարող նոյնը անել վերջինների նկատմամբ։

Որ ինտելիգենտ ընտանիքի երեխաները գտնվում են, համեմատաբար, աւելի լաւ պայմանների մէջ՝ այդ մասին խօսք չէ կարող լինել։ Բայց որ նրանք էլ, չունենալով իրանց շուրջը մանկավարժ—դաստիարակ, որ 3—4 տարի շարունակ իր ուսերի վրա առնէր ու տանէր երեխաների ընդհանուր զարգացման ոչ—դիւրին գործը, մնում են անմշակ, այդ մասին էլ, կարծում եմ, դարձեալ խօսք չէ կարող լինել։ Եւ անմշակ մնալով, պատահականութիւնից միայն օգտվելով՝ ինտելիգենտ ընտանիքի երեխաները կորցնում են—համարձակ կարելի է ասել—75% այն բանից, ինչ որ նրանք կարող կը լինէին ձեռք բերել աւելի բարեյաջող պայմաններում։

Բոլորովին ուրիշ տեսարան տեղի կունենար, եթէ մի գեղեցիկ օր պետական դպրոցներին կից, արական թէ իգական, բացվէին մանկական պարտէզ—նախակրթարաններ։

Այն ժամանակ՝ եւ հարուստը, եւ աղքատը, եւ ինտելիգենտը, եւ արհեստաւորը, ամենքը, ամենքը կշտապէին մտնել պետական դպրոցներին կից մանկական պարտէզները եւ լցնել նրանց ծայրէ ի ծայր։

Այն ժամանակ՝ շէմքից դուրս, փակված դրոների առաջ ծարաւ մնացող—սպասողների թիւը անհամեմատ աւելի մեծ կը լինէր, քան ներս

ՄՕՍԿՎԱՑԻ ՀԱՅԵՐԻ ՎԱՐՔ ՈՒ ԲԱՐՔԻՑ

—

Հանգամանքները կրկին նետեցին ինձ Մոսկվա, եւ այս անգամ ուզում եմ մի քանի տեղեկութիւններ հաղորդել հայ ընթերցողին այստեղի եկեւոր հայերի վարք ու բարքից։

Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ հայերս աւելի շուտ ընդօրինակում ենք ուրիշներից նորանց արտաքինը—թէ տարազով եւ թէ նիստ ու կացով։ Այդ կապկային առանձնայատկութիւնը մեզանից ոչ ոք չէ կարող խլել։ Վերցրէք Մոսկվա եկող հիւրերին։ Երէկվայ արաբաջին այսօր ցիլինդրը գլխին, նժոյգը լծած թռչկոտում է մայրաքաղաքի այլ եւ այլ անկիւնները իր ընդարձակ գործերը կատարելու։ Նա արդէն մոռացել է, թէ ինչ էր առաջ ինքը եւ կարծում է, որ եթէ փողը շատացել է, ուրեմն ինքն էլ փոխվել է, փողի հետ աւելացել է եւ խելքը։ Այլ եւս նա հնարաւոր չէ համարում իրանից քիչ ունեցողներին ձեռք մեկնել բարեւելիս եւ տեղն եկած ժամանակ՝ ուղղակի նկատում է, որ «վայել չէ քեզ առաջուց ձեռք մեկնել, եթէ իմ ձեռը ոչ մի չարժում չէ գործում»։ Ցիշում եմ, թէ ինչպէս մի անգամ այդպիսի հաստատուններից մէկը թղթախաղի ժամանակ անպատուում է մի պրոֆէսորի եւ երբ պրոֆէսորը նկատում է, որ այդ կոմն իրան լաւ պահէ ու չը մոռանայ, որ այսօր ինքը փող ունի՝ վաղը կարող է կորցնել ամեն ինչ եւ կրկին դառնալ նոյնը «ինչ որ առաջ էր», այդ հերոսը առանց այլ եւ այլութեան պատասխանում է—«վա, էսօր պրոֆէսոր ես, վաղը իմ կառապանը կը դառնաս», եւ յետոյ դուրսը պատմում էր, թէ ինչպէս շաւ խայտառակել է գիտնականին։

Ցաւալին այն է, որ այդ պարոնները Եկել են Մոսկվա արդէն բաւականին տարիքաւոր հասակում եւ բերել են իրանց ընտանիքները, բայց չեն կարողանում ընտանեկան մաքրութիւնը պահպանել. այս դէպքումն էլ աչխատում են օրինակել ուրիշներին։ Շատերը դրանցից, բացի օրինաւոր ամուսին ունենալուց, նոյն իսկ զաւակներ, անպատճառ պահում են եւ սիրուհիներ։ Այդ կողմից անբարոյականութիւն սերմանող կաֆէ-շանտանները, մանաւանդ յայտնի Օմոնը ու Եարը առատ պաչար են մատակարարում։

Կայ եւ այնպիսին, որ քաչվում է Մոսկվայում որ եւ է լրբութիւն անելուց, իսկ երբ ընկնում է արտասահման կամ այլ քաղաք—աչխատում է ցոյց տալ իր գրպանի ու գլխի հաստութիւնը—կաֆէ-շանտանում նստած, առանց քաչվելու իր ալեւոր մազերից, նոյն իսկ տասնեակ հազարներ է չպրտում, որպէս զի դէթ մի գիշեր վայելէ աչքի ընկնող անառակ կնոջ հրապոյրները։

Կարծես թէ սրանց գերազանցելու համար հանդէս է գալիս մի ուրիշը—կնոջը (օրինաւոր) հեռացնում է եւ վերցնում մի սիրուհի. հարիւր հազարներ է ծախսում վրան. արտասահմանում այդ անառակ կինը փայլում է իր զարդարանքներով եւ հերոսը գոհ է, որ ամարային սեզոնի վերջը լրագրում փոքրիկ նկատողութիւն է տպվում, թէ «այս տարի այս ինչ կուրորտում փայլում էր իր հարուստ կեանքով այս ինչ հարուստ վաճառականի... կինը»։

Այսպէս են անցնում իրանց կեանքը բուրժուաները, որոնց հասակը պէտք է գոնէ կասեցնէր, բայց նրանք դեռ երիտասարդ են... անասնային կեանքով։

Ցաւալին այն է, որ այս հերոսները օրինակելի են դառնում եւ երիտասարդութեան համար։ Ահա ձեզ մի երիտասարդ, լաւ կրթված ու լաւ ընտանիքի զաւակ. ապահովված նիւթապէս, բայց... ի չարն է գործ դնում իր ապահով դրութիւնը։ Մօդան, շանտանը, կինը—նրա raison d'être են կազմում։ Առանց կարմրելու պատմում է եւ ցոյց տալիս ընկերներին իր հերոսութեան զոհերին. առանց քաչվելու հպարտութեամբ պատմում է, որ արտասահմանից բերել է առել դիցուք 40 հատ փողկապ միանգամից՝ հատը 10 բուբլիով. միանգամից 15 զոյգ կոշիկ է առնում, որպէս զի օրը մի զոյգը հագնէ եւ ցոյց տայ, որ ինքը շատ փող ունի։ Մի ուրիշը մաչում է իր ծաղիկ կեանքը, եւ երբ անցնում է 5 կամ 10 տարի, «խելքը գլուխն է հաւաքում» ու սկսում է փնտռել հայ աղջիկ, որպէս զի ընտանիք ունենայ։ Սակայն որքան մաչված է լինում այդ ժամանակամիջոցում նրանց կեանքը, արդէն ամեն ինչ նրանց համար դառնում է ձանձրալի։ Կնոջը հետաքրքրում է կեանքը, իսկ ամուսինը չէ հեռանում կանաչ սեղանի մօտից, գիշերներ է լուսացնում թղթախաղով. իսկ կինը... նա էլ գտնում է իր համար զուարճա-ընկերներ։

Պատահում է, որ ուսանողն էլ անմասն չէ մնում այդ հոսանքից։ Բայց հետաքրքրականը այն է, թէ ինչպէս են վերաբերվում իրանց օրինակին հետեւող երիտասարդներին մեր հասակաւոր, անբարոյականութեան տիզմի մէջ խրված բուրժուաները։ Նրանք խրատում են, որ չէ կարելի այդպէս անել, պէտք է ամեն ինչ ծածուկ կատարվի, դուք դեռ անփորձ էք, լաւ չէ, որ երիտասարդ հասակում սիրուհիներ էք պահում եւ այլն։ Եւ կարծում են, որ երիտասարդները չը գիտեն, թէ քարոզողը «գայլի չարական կարգացողը» ինքը ինչ պտուղ է։

Դառն է փաստը, բայց անժխտելի. եւ ուղղել այդ հասարակութիւնը անհնար է։

Նուսէ

ՆԱՄԱԿ ՇՈՒԼԱՒԷՐԻՑ

—

Մայիսի 28-ին

Կարդալով «Մշակի» 93 համարի «Պէտք է բարւոքել անօգնական վիճակը» առաջնորդողը, հարկ եմ համարում այդ առիթով բերել իրականութիւնից վերցրած մի քանի փաստեր։

Շուլաւերը գիւղերից առաջինը փորձեց սեփական բժիշկ ունենալ, սակայն իւրաքանչիւր անգամ բժիշկ գտնելու համար, չը նայած լրագիրներում տպված յայտարարութիւններին, շատ դժուարութեամբ էինք ցանկացողներ գտնում. եկողն էլ մի տարուց աւել չէ ուզում մնալ։ Բացառութիւն էր կազմում միայն պ. Մկրտիչ Շապաշնիկեան, որ, իբրեւ գաղափարական մարդ, անպայման վճռել է ծառայել գիւղական աղքատութեան բանւոր դասի համար։ Ցարգելի բժիշկը մի քանի ամիս ընդմիջումից յետոյ մեզ մօտ երկու տարուց աւել ծառայեց, սիրեց ժողովրդին եւ սիրվեց նրանից։ Եթէ իւրաքանչիւր երիտասարդ բժիշկ համաձայնվէր գոնէ երկու տարի ծառայել գիւղերում, այն ժամանակ մենք ստիպված չէինք լինի շարունակ դիմումներ անել եւ դիոգենէսեան լապտերով բժիշկ որոնել։

Գուցէ շատերի կարծիքով մեղաւորը գիւղն է, որովհետեւ այնտեղ ապրել չէ կարելի. բայց ինչու չէ կարելի, այդ մեզ համար անհասկանալի է։ Շուլաւերում օդն ու ջուրը առողջարար են, բնութիւնը անսման, բնակարանները վատ չեն, ուտելեղէնների պակասութիւն չէ զգացվում։ Այստեղ էլ մարդիկ են ապրում եւ ոչ վայրենիներ։ Հետեւապէս մեղքը մեր երիտասարդներինն է, որոնց համար գաղափարն ու սկզբունքը միայն գոյութիւն ունեն, քանի որ նրանք ուսանող են։ Ճիշդ է, բժիշկը իրաւունք ունի միայն գանգատվել այն բանի վրա, որ գիւղում աղքատներ շատ կան, կանոնաւոր բժշկութեան յարմարութիւններ չը կան, որքան էլ ծանր լինի հիւանդի դրութիւնը եւ պէտք զգայ լուսաւոր ու տաք բնակարանի եւ մնընդարար կերակուրների, այնուամենայնիւ նրա կերածը ցամաք հաց է, լոբի կամ սոխ, բնակարանը խոնաւ է, վերեւից անձրեւը ծծվում է, իսկ ինքը պառկած է խոնաւ գետնին, մի կտոր թաղիքի վրա, ի հարկէ այսպիսի դէպքերում հիւանդը մեռնում է, բժիշկը յուսահատվում է եւ կարծում, որ իրան բամբասում են թէ՝ «մեր բժիշկը ոչինչ չէ հասկանում»։ Բայց չէ, գիւղացին բամբասող չէ քաղաքացիների պէս, որոնք շատ բժիշկներ ունենալու պատճառով սովորութիւն են արել բամբասել՝ որ այս ինչ բժիշկը խելօք է, այն ինչ բժիշկը ոչինչ չէ գիտէ։

Մերոնք էլ համոզված են, որ բժիշկը Աստուած չէ եւ ոչ էլ տէրտէր, որ շատ մեռնողների թւից ուրախանար։

Ուրեմն, վերջին խոչընդոտները հեռացնելու համար, հարկաւոր է գիւղին գոնէ սկզբնական օգնութեան հիւանդանոց պահել (амбулаторная больница) տասը մահճակալով։ Բայց որտեղից. հեշտ է արդեօք գիւղացուն հիւանդանոց պահել, մանաւանդ որ շրջակայ գիւղերը տարբեր ազգաբնակութիւններից լինելով, ոչ մի դէպքում չեն համաձայնվում ընդհանուր ոյժերով հիւանդանոց պահել։ Շուլավերը կարող է, իբրեւ մեծ գիւղ, գոնէ երկու տարվայ փորձառութիւն ունեցող բժշկին վճարել 1800 բուբլի, այն պայմանով, որ նա տեղացիներից ձրիապէս թեթեւ հիւանդներին ընդունի իր տանը, ծանր հիւանդներին նրանց տներում եկեւորներից ու ոչ հարկատուներից ստանայ ի օգտին ըստ իր հայեցողութեան։ Գիւղը կը տա անհրաժեշտ գործիքներ 500 բուբլու, կահ-կարասիք ընդունարանի համար եւ աղքատներին դեղեր։ Մեր կարծիքով, այս պայմանները վատ չեն բարեխիղճ մարդկանց համար։

Եթէ այս պայմաններով էլ բժիշկ չը գտնվում է ցանկալի, որ ոչ մի բարերար առաջ պարտաւորեցնելու երիտասարդներին աւարտելուց յետոյ անպայման չորս-հինգ տարի ծառայել գաւառներում՝ ոչ ոքի բարերարութիւն չանէ, կամ գիւղերը որոշ պայմաններով իրանց հաշուով ուղարկեն իրանց երիտասարդներին բժշկութիւն սովորելու։

Վ. Մեհրաբեանց

ՆԱՄԱԿ ՕԴԵՍՍԱՅԻՑ

—

Յունիսի 3-ին

Երէկ, յունիսի 2-ին, այստեղ կայացաւ ընդհանուր ժողով, որի պարապմունքի առարկաները էին—նախ՝ քննել եւ հաստատել Օդեսայի հայոց աղքատախնամ ընկերութեան հաշիւը 1901—1902 թ. համար. երկրորդ՝ հոգաբարձութեան ունեցած դրամագլխի գործադրութեան մասին եւ երրորդ՝ Օդեսայի հայոց եկեղեցական ծխական դպրոցը հոգաբարձութեան իրաւասութեան ներքոյ առնելու հարցի մասին։

Հոգաբարձութեան ելեւմուտքի հաշիւը, որի մասին իր ժամանակ արդէն հաղորդած եմ «Մշակին» (№ 90), ամփոփոխ հաստատվեց ընդհանուր ժողովի կողմից։

Հոգաբարձութիւնը այժմ ունի 6000 ր. ազատ

մոած բաղդաւորների թիւը։

Բայց ես մի փոքր հեռու գնացի. ներողութիւն։

Բացատրենք այժմ մանկական պարտէզի կոչումը եւ ցոյց տանք նրա կատարելիք դերը՝ մանուկների կրթութեան եւ դաստիարակութեան ասպարէզում։

Մանկական պարտէզը մի սոսկ խաղատուն չէ, այլ, այսպէս ասած, դպրոցի նախադուռն։ Սա էլ մի ուրիշ տիպի կրթական հիմնարկութիւն է, որտեղ ամեն մի առարկայ նոյնպէս անցնվում է սիստեմատիքաբար, յայտնի կարգ ու կանոններով եւ պրոգրամմով։

Մանկական պարտէզի նպատակն է, առաջին՝ օգնել ընտանիքին լաւ եւ ամուր հիմք դնելու մանուկի կրթութեանը, եւ երկրորդ՝ օգնել դպրոցին աջողապէս առաջ տանելու մանուկի ուսման եւ դաստիարակութեան գործը։

Մանկական պարտէզը լրացնում է ընտանեկան կրթութեան չատ պակասները։ Սրա հետ միասին նա պատրաստում է մանուկին մտնել դպրոց եւ համարձակ, առանց դժուարութիւնների հանդիպելու, առանց յոգնածութիւն զգալու, անցնել այն երկար ճանապարհը, որ տանում է դէպի բարձր գիտութիւնների տաճարը։

Մանկական պարտէզը, վերջապէս, մի օղակ է, որ ամուր եւ սերտ կապում է ընտանիքը դպրոցի հետ։

Եւ այդ ահագին նշանակութիւն ունեցող կապը դարձել է, վերջին ժամանակներս մանաւանդ, բոլոր դպրոցական վարչութիւնների եւ յայտնի մանկավարժների լուրջ ուշադրութեան առարկայ եւ մի հրատապ ինդիր, որ զբաղեցնում է մամուլը եւ արծարծվում նրա միջոցով։

Բազմակողմանի է մանկական պարտէզի ծրագիրը։

Մեր հայերիս մէջ քիչ կը պատահէք ընտանիքներ, որտեղ խօսում լինեն մաքուր հայերէն լեզուով։

Խառնեցէք, օրինակի համար, թուրքերէն, վրացերէն բառերը իւրաքանչիւր հայաբնակ տեղի կամ քաղաքի իրան յատուկ բարբառի հետ եւ դուք կը ստանաք այն հայկական աղաւաղված լեզուն, որ գործ է ածվում մեզ մօտ։

Այդ տեսակ բարբարոս լեզուի պաչարով մանուկը մտնում է մանկական պարտէզ։ Վերջինս զտում է այդ արմատացած խառնուրդը եւ սովորեցնում է երեխային խօսել մաքուր հայերէն։

Յետոյ՝ հայ, թուրք թէ վրացի մանուկը չը գիտէ երկու բառ կամ ամենահասարակ մի նախադասութիւն ռուսաց լեզուով։

Պարտէզը մեծ ուշադրութիւն է դարձնում պետական այդ լեզուի վրա։ Առանց միմեանցից բաժանելու, զուգահեռաբար, նա տանում է այդ երկու լեզուների գործնական ուսուցումը, այսինքն խօսելը, մանուկին չրջապատող առարկաների, զանազան զարգացուցիչ խաղալիքների, պատկերների եւ մանկական պատկերազարդ դասագրքերի միջոցով։ Փոքրիկ նպատակայարմար հէքիաթները, առակները, երգերը, համառօտ նկարագրութիւնները մեծապէս նպաստում են մանուկներին այդ երկու լեզուի մէջ վարժվելուն։ Եւ եթէ պարտէզը ունի իր պատերի մէջ, երեխաների չրջանում, մի կամ մի քանի ռուս մանուկներ, այդ հօ մի մեծ խթան է ռուսաց լեզուի անզգալի եւ արագ կերպով իւրացման՝ հայ, թուրք եւ այլազգի երեխաների կողմից։

Պարտէզը ծանօթացնում է մանուկներին հայ եւ ռուս տառերի հետ զանազան «կուբիկների», լոտոների եւ շարժական այբուբենի միջոցով, սովորեցնում է կազմել վանկեր, կարդալ փոքրիկ, ոչ-բարդ եւ հեշտ հասկանալի բառեր եւ նախադասութիւններ։

Պարտէզը՝ բազմատեսակ մօդելների, խաղալիքների, պատկերների, բնական նմուշների, չնչաւոր կենդանիների եւ—քանի մէկը թւեմ—միջոցով երեխաներին ծանօթացնում է այն բոլոր առարկաների հետ, որոնք աւանդվում են ստորին եւ միջնակարգ դպրոցներում, միայն յայտնի բան է, այն չափով, որ կարող է համապատասխան լինել մանկական մատաղ հասակին եւ աւելի մատաղ, նոր-նոր բողբոջող մտաւոր զարգացողութեան ատիճանին։

Այդ առարկաները, բացի լեզուներից, են կրօն, թուաբանութիւն, աշխարհագրութիւն, բնական պատմութիւն, կենդանաբանութիւն, ձեռագործ, նկարչութիւն եւ այլն։

Այո, այս ամենը անում է մանկական պարտէզը, խոյս տալով չոր ու ցամաք, դժուարամարս տէրմիններից, պահպանելով երեխայի մէջ զուարթութիւն, աչխոյժ, եւ դարձնելով իր բազմակողմանի եւ անընդհատ փոփոխվող զրոյցները կենդանի եւ հետաքրքրական։

Մանկական պարտէզը մանուկների բարոյական կրթութիւնը կենտրոնացնում է միայն սէրի մէջ, սէր դէպի ընկերը։ Կատարելով, կարելիին չափ, երեխաների անմեղ ցանկութիւնները եւ քմահաճոյքները պարտէզը, իբրեւ կենդանի օրինակ, անխտիր սիրում է իր խնամատարութեան յանձնված բոլոր երեխաներին։ Նա, առանց շտապելու, սիրով եւ քաղցրութեամբ, ուղղում է երեխաների կոպիտ ինստինկտները, եսականութիւնը, ագահութիւնը, տա՛ից բերած այլ եւ այլ պակասութիւնները եւ աչխատում է արմատացնել նրանց մատաղ սրտերում աւետարանական հետեւեալ անսման խրատը, որ պէտք է կազմէ բոլոր բարոյագիտութիւնների եւ օրէնքների հիմքը.

«Արա քո ընկերին այն, ինչ որ կուզես, որ նա քեզ անէ, կամ թէ՝ մի արա քո ընկերին այն, ինչ որ չէիր ցանկանայ, որ նա քեզ անէ»։

Ֆիզիքական կրթութեան վրա էլ պարտէզը դարձնում է մեծ ուշադրութիւն։ Նա սարքում է զանազան տեսակ մանկական խաղեր եւ նրպատակայարմար մարմնամարզութիւններ. աչխատել է տալիս երեխաներին պարզ օդում կատարում է նրանց հետ զբօսանքներ, բացատրում, հասկացնում է բնութեան մէջ իւրաքանչիւր քայլափոխում պատահող անչունչ թէ չնչաւոր առարկաները, կատարեալ ազատութիւն է տալիս երեխաների դիմումներին եւ բաւարարութիւն՝ նրանց անվերջ եւ հետաքրքրաքրքրաշարժ հարցերին։

Մանկական պարտէզները, ընդհանրապէս ունեն իրանց կից, առանձին դասարաններում առանձին բաժանմունքներ 1—2—3 տարեկան դասընթացքով։ Այստեղ, ինչպէս տարրական դպրոցում, աշակերտները եւ աշակերտուհիները պատրաստվում են բէալական դպրոցի, գիմնազիական եւ իգական գիմնազիօնի այս կամ այն դասարանները մտնելու համար։

Այսքանով չատանում ենք մենք եւ կանգ առնում։

Մանկական պարտէզի մէջ 2—3—4 տարեկան կացնող եւ նրա «կուրսը» աւարտող երեխան, տղայ թէ աղջիկ, բաւականաչափ պատրաստված մի աշակերտացու է։ Որ դպրոցն ուզում էք ուղարկեցէք նրան, որ դասագիրքը կարդում է բացէք նրա առաջ։ Նրան ծանօթ է ամեն ինչ, նրա ճանապարհը հարթված է։ Ամենանց ուրիշի օգնութեան՝ նա կարող է ազատանցնել մի դասարանից միւսը, ստորնակարգ դպրոցից միջնակարգը եւ այնտեղից բարձրագոյնը։

Ծնողները այլ եւս ստիպված չեն լինի, ինչպէս այդ տեսնում ենք ամեն օր, ամեն ամիս, ամեն տարի, զանազան բեպետիտորների միջոցով, մանաւանդ փողի ոյժով, առաջ քարշ տալ իրանց անպաչար, անպատրաստ եւ ամենատարանի յիմար կոյսի նման ուշացած, խեղճ զաւակը՝ մի պատառ վկայականի համար։

Ամեն բան իր ժամանակին։

Սերմացան

դրամագլուխ։ Այդ գումարով նա կամենում է եկեղեցական ազատ հողի վրա կառուցանել մի որ եւ է չինութիւն, որից ստացված արդիւնքներով կարելի լինի ապահովել եկեղեցական ծխական դպրոցը։ Այդ գումարը կայանում է տոկոսաբեր թղթերի մէջ եւ բերում է միայն 2½%, այն ինչ չինութիւնը, որի հողը պէտք է լինի ձրի՝ կը բերէ չորս-հինգ եւ աւելի անգամ։ Այդ հարցը որոշվեց յանձնել մանաժողովի, որ ուսումնասիրէ պայմանները եւ չինութեան յատակագծով ու նախահաշիւով ներկայացնէ ընդհանուր ժողովին։ Այդ ի հարկէ շուտ չի լինի։

Ընդհանուր ժողովի նախագահի անունով ստացված էին երկու զեկուցումներ։ Դրանցից մէկը ներկայացրել է դպրոցի այժմ հրաւիրված նախկին ուսուցչուհին, որի մէջ ընդարձակօրէն նկարագրվում է դպրոցի անմխիթար վիճակը՝ չնորհիւ նրա ներկայ կառավարչի։ Զեկուցագիրը պարունակում է մի շարք դառն մերկացումներ, որոնք շատ զարմացրին ժողովականներին։ Ահա թէ այդ եւ թէ այլ պարագաներ աչքի առաջ ունենալով, ընդհանուր ժողովը վճռեց դպրոցը յանձնել հոգաբարձութեան, պարտաւորեցնելով վերջինիս հսկել դպրոցի ինչպէս տնտեսական, այնպէս էլ ուսումնական մասի վրա, իր միջից ընտրած տեսչի կամ կառավարչի միջոցով։

Միւս զեկուցումը, երեւակայեցէք, կրում էր հետեւեալ վերնագիրը. «Անանուն նամակ ընդհանուր ժողովի նախագահին». այդտեղ Օդեսայի հայ պարիկմախէրների համար ասված էր, որ նրանք էլ «ազգային սափրիչներ» են, սակայն... հոգաբարձութիւնը վատ օր է ընտրել ժողովի համար, այն է՝ կիրակի, երբ նրանք ամենից շատ են խուզելով զբաղված»... Արդեօք, պարիկմախէրների համքարութիւնն է գրել այդ «անանուն» նամակը, թէ նրանց շահերը իր սրտին շատ մօտ ընդունող մէկը՝ այդ չը գիտենք. բայց բանը նրանումն է, որ երկու նախկին՝ չը կայացած ժողովները նշանակված են եղել ոչ կիրակի օրեր, բայց ոչ ոք նրանցից չէր բարեհաճել ժողովի գալու։

Պախարակելի է եւ հոգաբարձութեան անհոգ վերաբերմունքը դէպի ընդհանուր ժողովը։ Վերջինս պէտք է կայանար անցած մայիսի սկզբին, թէեւ առաջնորդարանից ժողով գումարելու թոյլտուութիւնը վաղուց էր ստացված։ Այդ թոյլտուութիւնը ստացվել էր տեղիս քահանայի անունով, որը նոյնպէս հոգաբարձութեան անդամ է։ Եւ ահա, մի գեղեցիկ օր, ստանում ենք հրաւէր ընդհանուր ժողովի գնալու։ Եւ ինչպարապմունքի առարկաները միանգամայն յեղափոխած հրաւիրագրի տակն էլ կնքված է քահանայի ապօրինի ստորագրութիւնը, որ թէեւ մի փոքր, բայց շատ բնորոշ երեւոյթ է ամեն դէպքում ապօրինութիւն սիրող մեր հոգեւորականութեան բարքերից։ Նա կամենում էր ժողով գումարել նոյն իսկ հաւաքված 6 ծխականներով, հոգաբարձութեան կողմից ինքը միայն ներկայ գտնվելով։ Հանելուկը լուծվում է, երբ հոգաբարձութիւնը ինքը չէ գալիս ժողովի եւ ուղարկում է իր մի անդամին յայտարարելու, որ այդ ժողովը հոգաբարձութիւնը չէ գումարում...

Նշանակվում է երկրորդ ընդհանուր ժողով, որ պէտք է կայանար մայիսի 28-ին, ժամը 6-ին երեկոյեան։ Նշանակված ժամին հաւաքվում են բաւական թիւով ժողովականներ. դառնում է ժամը 7-ը՝ դեռ եւս չը կայ հոգաբարձութիւն, գալիս է 8-ը՝ չը կայ ու չը կայ հոգաբարձութիւն։ Եւ այսպէս երկու ժամ ապարդիւն կերպով կորցնելով, ժողովականները ցրվում են սաստիկ տրտնջալով հոգաբարձութեան դէմ։ Վերջապէս, երրորդ անգամ ստանում ենք նոր հրաւիրագրեր, ժողովը յունիսի 2-ին, պատարագից յետոյ լինելու յայտարարութեամբ։ Ծիծաղելին այն է, որ վերջին հրաւիրագրերի մէջ ասված է. «Ժողովը, անբաւական անդամ ծխականների որոշ թիւ չը հաւաքելու պատճառով՝ պէտք է անպատճառ կայանայ այժմ...

Պ.Պ. հոգաբարձուներ, դիմում ենք ձեզ եւ արդարասիրութեան ենք հրաւիրում. «չէ թէ ծխականների որոշ թիւ չը հաւաքելու պատճառով, այլ պ.պ. հոգաբարձուներիդ բացակայութեան պատճառով չը կայացաւ անցեալ անգամ նշանակված ժողովը։

Սրանից մի քանի տարի առաջ տեղի ունեցած ընդհանուր ժողովներից մէկում տեղի է ունեցել հետեւեալը. մի տիկին հոգաբարձութեան տրամադրութեան տակ է դրել 5000 ր. մի գումար՝ միայն խօսքով... այդտեղ հարց է բարձրացնվում ժողովի կողմից չնորհակալութիւն յայտնելու յիշեալ տիկնոջը։ Բայց ժողովականներից մէկը, որ ըստ երեւոյթին, փորձված է եղել դառն օրինակներով՝ բողոքել է դրա դէմ, ամեն խոստում կամ ցանկութիւն դեռ չնորհակալութեան արժանի գործ չը համարելով։ Վճռվում է ընդհանուր ժողովի երախտագիտութիւնը յայտնել յարգելի տիկնոջը, որից սակայն մինչեւ օրս հոգաբարձութեան դրամարկղը ոչ մի կօպէկ չէ մտել։ Խոստանալ եւ չանել՝ դա սովորական երեւոյթ է մեր մէջ։ Դատարկ խոստումներ անելու գինը մէկ գրօշ էր, այժմ դատարկ չնորհակալութիւն անելու գինն էլ եղաւ մէկ գրօշ։

Ար-Թոն

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կարա-Մուրզայի աշխատութիւնների հրատարակութեան համար ստացանք Թիֆլիսում Մն. Խունունցից 5 ռուբլի, Ադ. քահ. Տէր Յովհաննիսեանից 1 ռուբլի, Բալախանիից, Ա. Տէր-Յարութիւնեանի միջոցով, 30 ռուբլի, որ հանգանակված է Հ. Մելիքեանի նաւթարդիւնաբերութեան ընկերութեան ծառայողների մէջ։ Ընդամենը նախկին գումարների հետ միասին ունենք 1062 ռուբլի 50 կօպէկ։

—

Թիֆլիսում յունիսի 8-ին տեղի ունեցած անձրեւի եւ որոտի ժամանակ կայծակը խփեց արտիլերիական զօրքի զինւոր Տրոնովին, երբ նա պառկած էր վրանի տակ։ Վնասվածին հիւանդանոց ուղարկելուց եւ բժշկական քննութիւն կատարելուց յետոյ երեւաց, որ Տրոնովի ոտները ոչ միայն այրված են կայծակի հարուածից, այլ եւ նա անդամալոյծ է դարձել։

—

Կառավարչական շրջաններում միջնորդութիւն է յարուցված հրատարակելու մի իրաւաբանական հանրամատչելի լրագիր գիւղացիների համար։ Լրագիրը պէտք է ունենայ ընդարձակ ծրագիր եւ արժենայ շատ էժան։

—

«Каспій» լրագրի ասելով, Բագուի նաւթարդիւնաբերական ընկերութիւններից մէկը մասնաւոր հեռագիր է ստացել Պետերբուրգից, որի մէջ ասված է, թէ յոյս կայ, որ նաւթի պուդավճարը բաժնեվճարով փոխարինելու հարցը որոշվի հետեւեալ կերպով,—այն կապալառուները, որոնք տալիս են, որպէս պուդավճար, 5 կօպէկից ոչ աւելի, մնում են կըրկին որպէս կապալառուներ, իսկ նրանք, որոնք վճարում են 5 կօպէկից աւելի, իրաւունք են ստանում ոչնչացնելու պայմանագրերը եւ յետ ստանալու իրանց գրաւականները։ Վերջինների հոգաբաժինների վերաբերմամբ տեղի կունենայ նոր աճուրդ։

—

«Кавказъ» լրագրին հեռագրում են Պետերբուրգից. «Օդեսայի համալսարանի լաբորանտ Նեմիրովսկի նշանակվում է Ալէքսանդրապոլի առեւտրական ուսումնարանի վերատեսուչ։— Նոյն լրագրին հեռագրում են նոյն տեղից, թէ հրատարակված է շատ Անդրկովկասեան գիւղացիների հողային կարգաւորման վերաբերմամբ։

—

Պետերբուրգում հիմնվում է մի նոր ընկերութիւն, որի նպատակն է նպաստել տնայնագործութեան զարգացման Ռուսաստանում։ Ընկերութեան հիմնադիրները արդէն մշակում են նրա կանոնադրութիւնը։

—

Երկրագործութեան եւ պետական կալուածների մինիստրութիւը Գերմանիա եւ Աւստրիա է ուղարկում գաղտնի խորհրդական Շտոսին, որպէս զի նա այդ երկիրներում ուսումնասիրէ բանուորներին դժբաղդ դէպքերից, հիւանդութիւններից, աշխատանքի անընդունակ դառնալուց եւ ծերութիւնից պետութեան միջոցներով ապահովելու գործը։

—

Երկրագործութեան դէպարտամենտը այս ամառվայ ընթացքում գիւղատնտեսական կուրսեր է բաց անում ժողովրդական ուսումնարանների ուսուցիչների համար 36 տեղերում։

—

Պետերբուրգի տների պահապաններից 86 հոգու Բարձրագոյն չնորհված են 1 ոսկեայ եւ 85 արծաթեայ մեդալներ՝ «За усердіе» մակագրութեամբ՝ կրծքերին կրելու համար։ Հոգեգալստեան տօնի օրը Պետերբուրգի քաղաքապետի պաշտօնակատարը անձամբ բաժանեց 86 հոգուն չնորհված մեդալները։

—

ՁԽԱՐ գիւղից մեզ գրում են. «Մօտ օրերս այստեղ վախճանվեց տեղիս եկեղեցու բաղմաչիաստ տիրացու Կ. պօլսեցի Գէորգ Տէր-Պետրոսեանը։ Նա սրանից քսան տարի առաջ Կ. Պոլսից Զխար գալով, նախ ուսուցչութեամբ է պարապել տեղիս երկսեռ (այժմ փակված) դպրոցում եւ մի եւ նոյն ժամանակ տիրացուութիւն ու լուսարարի պաշտօն է վարել եկեղեցում։ Նրա ուսուցչութեան օրով մեր մատաղ սերունդը, պէտք է ասել, բաւական առաջ գրնաց մայրենի լեզուի մէջ, աշակերտներն ու աշակերտուհիները սովորեցին շատ բան կարճ ժամանակամիջոցում։ Նրա չնորհիւ ունեցանք մենք այստեղ բաւական հմուտ կազմակերպված երգեցիկ խումբ։ Հանդուցեալը իր կարողութեան չափով օգնել է չատերին։ Այս բոլորը նա անում էր բոլորովին ձրի, առանց մի որ եւ է վարձատրութիւն ստանալու։ Ապրում էր տեղիս ծխատէր քահանայի ընտանիքում։ Ժողովուրդը բաւական պատուեց իր սպասաւորին միայն վերջին օրը, չքեղ թաղելով նրան, բայց լաւ կը լինէր, որ նրան կենդանութեան ժամանակ գնահատէր ու սիրտը ուրախացնէր»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«С.-П. Вѣд.» լրագրին գրում են Կ. Պոլսից. «Մահմեդական ընտանիքների յաճախակի գաղթականութիւնները Բոսնիայից, Հերզեգովինայից եւ Ռումինիայից դէպի Փոքր-Ասիա քրիստոնեաների դրութիւնը կատարելապէս անտանելի են դարձրել այդ երկրում։ Մահմեդական գաղթականները, զրկված այն արտօնութիւններից, որ վայելում էին իրանց նախկին բնակավայրերում թիւրքական իշխանութեան ժամանակ, վրէժը լուծում են քրիստոնեաներից։ Իսկ կառավարութիւնը, կամենալով ձեռք բերել նրանց համակրութիւնը եւ այսպիսով դարձնել նրանց համիսլամականութեան կասկածելի գաղափարի կողմնակիցներ, կատարեալ ազատութիւն է տալիս գործելու, ինչ էլ որ կամենան։ Այս հանգամանքը անելանելի է դարձնում քրիստոնեաների վիճակը այն տեղերում, ուր գաղթականները բնակութիւն են հաստատում. ամենից վատը այն է, որ ոչ ոք չէ համարձակվում բողոքել... Զարագործները խլում են քրիստոնեաների հողերը, յափշտակում են նրանց դաշտերը, որոնց մշակման վրա այնքան քրտինք են թափել տեղացիները։ Յաճախ այդ դէպքերի առիթով մահմեդական գաղթականների եւ քրիստոնեաների մէջ տեղի են ունենում ընդհարումներ, բայց ոյժը միշտ գերակշիռ է հանդիսանում եւ խեղճ քրիստոնեաները ի զուր լաց են լինում իրանց վիճակի վրա։

—Յունիսի 7-ին Սիբիլէնօրտում վախճանվեց Սաքսոնական թագաւոր Ալբերտ-Ֆրիդրիխ-Աւգուստ։ Ծերունի թագաւորը վաղուց արդէն ծանր հիւանդ էր եւ նրա մահը անսպասելի չէր։ Նա ծնվել էր 1828 թ. ապրիլի 23-ին Դրէզդէնում։ Լինելով այն ժամանակվայ թագաժառանգ եւ ապա թագաւոր Յոհանի աւագ որդին, նա ստացել էր լաւ կրթութիւն՝ սաքսոնական պատմաբան Լանգէնի ղեկավարութեամբ։ 1847 թ. երիտասարդ պրինցը այցելում էր Բոննի համալսարանը, բայց արդէն 1848 թ-ին, փետրվարի յեղափոխութեան պատճառով, ստիպված էր հեռանալ Բոննից եւ մտնել զինուորական ծառայութեան մէջ։ Այս ասպարէզում նա ցոյց տուեց աչքի ընկնող ընդունակութիւն։ Առանձնապէս նշանաւոր դեր կատարեց նա ֆրանսիական պատերազմի ժամանակ, երբ որպէս սաքսոնական կօրպուսի հրամանատար մասնակցեց գերմանական զօրքի նշանաւոր յաղթութիւններին Գրավէլոտտի եւ Սէդանի մօտ։ Հաշտութիւնից յետոյ պրինցը ստացաւ ֆելդմարշալի աստիճան։ Ֆելդմարշալական գոյիսոնը ուղարկեց նրան ռուսաց Ալէքսանդր II կայսրը։ 1873 թ-ին հոկտեմբերի 29-ին, իր հօր մահից յետոյ, պրինց Ալբերտ բարձրացաւ սաքսոնական գահը եւ թագաւորեց 19 տարի։

—Իրլանդացիները օգուտ են քաղում ամեն մի դէպքից իրանց դժգոհութիւնը ցոյց տալու համար անգլիական բէժիմից։ Անցեալ երեքշաբթի օրը, համայնքների ժողովի չինութեան մէջ, նրանք կազմեցին մի միտինգ, որի ժամանակ ընդունեցին հետեւեալ որոշումը. «Ի նշան բողոքի այն բէժիմի դէմ, որ տիրում է այժմ Իրլանդիայում, իրլանդական պարլամենտական կուսակցութիւնը վճռեց չը մասնակցել թագադրութեան հանդէսներին»։ Բացի սրանից պատգամաւորները որոշեցին թագադրութեան օրը մի միտինգ կազմել Դուբլինում Իրլանդիայի դրութիւնը քննելու համար։

—«Daily Expresse» հաղորդում է, իբրեւ լուր, թէ Բոտա, Դէվէտ, Դէլարէյ եւ Լիւկաս Մէյեր նախ կայցելեն Կրիւգէրին Հոլլանդիայում եւ ապա կուղեւորվեն Լօնդոն։ Անգլիայից Դէվէտ կը գնայ Գերմանիա եւ Աւստրիա, Բոտա Ֆրանսիա, Բէլգիա, Հոլլանդիա, իսկ Լիւկաս Մէյեր-Ամերիկա՝ ժողովարարութիւն անելու բօէրների օգտին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՍ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

12 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ֆինանսների մինիստրի ուղեւորութեան լուրը դէպի արտասահման անհիմն է։ Վճռված է գործարանների մէջ րէլսների պատուէրը բաժանելու այժմեան ձեւը պահել մինչեւ այս տարվայ վերջը։ —Հաագա ուղեւորվեց ռուս կառավարութեան պատգամաւոր Կօմարով՝ իր օգնականի—Կօմանդօրեան կղզիների կառավարչի հետ՝ մասնակցելու միջնորդ դատարանին, որ պէտք է քննէ 1891 թ-ականին ամերիկական առագաստանաւերը կէտ որսալու համար արգելված ջրերում բռնելու գործը։

ԼՕՆԴՕՆ։ 12½ ժամին։ Թագաւորը քնած է. քունը հանգիստ է. ոյժերի դրութիւնը բաւարար է. այնպիսի նշաններ, որոնք վտանգ բպատնային, չը կան։

ՊԱՐԻԶ։ Լուրերին նայելով՝ կազմակերպվում է արշաւանք դէպի Սիամ, որտեղ Անգլիայի գործունէութեան եղանակը անխուսափելի է դարձրել սպառազինված միջամտութիւնը։

ԼՕՆԴՕՆ։ Պաշտօնական բիւլլետէն։ Առաւօտեան 10 ժամին եւ 30 րոպէին։ Գիշերվայ առաջին կէսը թագաւորը անցկացրեց անքունժամի 1-ից յետոյ նա մի քիչ քնեց։ Թագաւորը չէ տանջվում։ Անբարեյաջող նշաններ չը կան։ Ի նկատի առնելով բոլոր հանգամանքները՝ կարելի է ասել, որ հիւանդութիւնը բարեյաջող ընթացք ունի։

ԽԱՐԲԻՆ։ «Ինկօու» չոգենաւով եկած չինացի բանուորների մէջ երեւացել են խոլերայից հիւանդանալու դէպքեր։ Բանուորները առանձնացրած են կարանտինում։ 169 հիւանդացածներից մեռան 81 հոգի։ Շրջապատված տարածութիւնից դուրս հիւանդանալու դէպքեր չը կան։

ԷԿԷՆԷՍ։ Նիւլանդի նահանգապետ Կայգօրոդովի գտած պատմական գերեզմանները զետեղված են անտառում, լիւթերականների գերեզմանատան մօտ. մնացել են միայն մի քանի մոռացված մամռապատ տապանաքարեր, որոնցից մէկի վրա կան ռուսական գրեր։ Այս գրերը Գանգէսի քահանայի մէջ միտք են ծագեցրել, թէ նրանք պատկանում են ռուսադաւանների մի հին մոռացված գերեզմանատան։ Նահանգապետը, պատմական փաստերի հիման վրա, պարզել է, թէ Գանգուտեան յաղթութիւնից քիչ առաջ՝ Պետրոս Մեծը Գանգուտում բացել է զինուորական հիւանդանոց. ակներեւ է, որ այստեղ են տեղափոխված Գանգուտի կուռում վիրաւորվածները, իսկ նրանցից մեռածները թաղված են գտնված գերեզմանատանը։ Յունիսի 8-ին տեղի ունեցած հոգեհանգստի ժամանակ նահանգապետը բացատրեց ներկայ եղող ծովային օֆիցէրներին եւ զինուորներին այն պատերազմի պատմական նշանակութիւնը, որին մասնակցողները թաղված են այստեղ։

ԼՕՆԴՕՆ։ Թագաւորը գիշերը հանգիստ անցկացրեց։ Բարդութիւններ չը կան։ Վիրաբուժական անդամահատութեան մասին հաղորդում են, թէ համարեա 4 դիւյիմ երկարութիւն ունեցող կտրուածք է արած աճուկի շրջանում՝ դէպի վեր՝ թեքված ուղղութեամբ՝ դէպի արտաքին ծածկոյթները։ Այն բանից յետոյ, երբ փորկապութիւն առաջացնող մասը կտրվեց եւ հանվեց, բժիշկները սկսեցին գործ դնել խողովակիկների սիստեմը, որպէս զի աղիքները մատչելի դարձնեն վիրաբուժական դանակին։ Կտրվածքը արված է առանց բարդութիւնների։

13 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Թագաւոր Կայսրը բարեհաճեց հրամայել 50,000 ռուբլի յանձնել Կազանի նահանգապետին՝ հրկիզեալներին օգնութիւն ցոյց տալու համար։

ԼՕՆԴՕՆ։ «Ռէյտէրի գործակալութիւն»։ Բիւլլետէն՝ երեկոյեան 6½ ժամին։ «Թագաւորը բաւական լաւ անցկացրեց օրը։ Ընդհանուր առմամբ՝ ոյժերը պահպանվում են բաւարար կերպով. չեն երեւացել այնպիսի նշաններ, որոնք առիթ տային առանձնապէս անհանգստանալու։

ԲԵՐԼԻՆ։ (Մեր սեփական թղթակցից)։ Լօնդոնից ստացված լրագրական տեղեկութիւններին նայելով՝ թագաւորի դրութիւնը չափազանց կրիտիքական է։ Կօպէնհագէնից հաղորդում են, իբրեւ լուր, թէ իբր դանիական թագաժառանգը հաղորդել է իր ամուսնուն, որ անգլիական թագաւորի փրկութեան համար այլ եւս յոյս չը կայ։

ԼՕՆԴՕՆ։ «Ռէյտէրի գործակալութիւն»։ Բիւլ-

լրտէն երեկոյեան 11 ժամին։ «Թագաւորի առողջական դրութեան մէջ նկատւում է աստիճանական բարւոքումն. նա ցերեկով մի քանի ժամ քնեց եւ աւելի ուրախ դարձաւ։ Վէրքի առողջանալը կատարւում է աջողութեամբ։»

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը նշանակված են Պետերբուրգի հաշուով, փակագծում Թիֆլիսի հաշուով)

Արագ գնացք Թիֆլիսից—Բագու շաբաթը մէկ անգամ ուրբաթ օրերը դուրս է գալիս առաւօտեան 10 ժամ 15 րոպ. (11 ժ. 49 ր.), հասնում է Բագու գիշերվայ 12 ժամ 11 ր. (1 ժ. 9 րոպէին)։

Արագ գնացք Բագուից—Թիֆլիս դուրս է գալիս ուրբաթ օրերը գիշերվայ 12 ժամ 52 րոպէ (1 ժ. 50 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 2 ժ. 45 ր. (3 ժ. 43 ր.)։

Արագ գնացք Թիֆլիսից—Բաթում ամեն օր դուրս է գալիս առաւօտեան 6 ժ. 45 ր. (7 ժ. 43 ր.) հասնում է Բաթում երեկոյեան 5 ժ. 2 ր. (6 ժ.)։

Արագ գնացք Բաթումից—Թիֆլիս ամեն օր դուրս է գալիս երեկոյեան 10 ժ. 10 ր. (11 ժ. 8 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 9 ժ. 4 ր. (10 ժ. 2 ր.)։

Պօստատար գնացք Բագուից դուրս է գալիս երեկոյեան 9 ժ. 22 ր. (10 ժ. 20 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 3 ժ. 56 ր. (4 ժ. 54 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 5 ժ. 9 ր. (6 ժ. 7 ր.), հասնում է Բաթում առաւօտեան 5 ժ. 40 ր. (6 ժամ 38 րոպէին)։

Մարդատար գնացքը Բագուից դուրս է գալիս ցերեկվայ 2 ժ. 27 ր. (3 ժ. 25 ր.), հասնում է Թիֆլիս առաւօտեան 7 ժ. 39 ր. (8 ժ. 37 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից առաւօտեան 8 ժ. 29 ր. (9 ժ. 27 ր.), հասնում է Բաթում երեկոյեան 8 ժ. 30 ր. (9 ժ. 28 ր.)։

Պօստատար գնացքը Բաթումից դուրս է գալիս գիշերվայ 11 ժ. 5 ր. (12 ժ. 3 ր.), հասնում է Թիֆլիս ցերեկվայ 11 ժ. 34 ր. (12 ժ. 32 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից ցերեկվայ 12 ժ. 36 ր. (1 ժ. 34 ր.), հասնում է Բագու առաւօտեան 6 ժ. 16 ր. (7 ժ. 14 ր.)։

Մարդատար գնացք Բաթումից դուրս է գալիս առաւօտեան 7 ժ. 5 ր. (8 ժ. 3 ր.), հասնում է Թիֆլիս երեկոյեան 6 ժ. 39 ր. (7 ժ. 37 ր.), դուրս է գալիս Թիֆլիսից երեկոյեան 7 ժ. 24 ր. (8 ժ. 22 ր.), հասնում է Բագու ցերեկվայ 12 ժ. 5 ր. (1 ժ. 3 ր.)։

Պօստատար գնացք դուրս է գալիս Թիֆլիսից դէպի Կարս երեկոյեան 8 ժ. 30 ր. (9 ժ. 28 ր.). հասնում է Սանահին 1 ժ. 35 ր. (2 ժ. 33 ր.), Ղարաքիլիսա գիշերվայ 3 ժ. 32 ր. (4 ժ. 30 ր.), Ալէքսանդրոպոլ առաւօտեան 7 ժ. 17 ր. (8 ժ. 15 ր.), Կարս ցերեկվայ 11 ժ. 1. (11 ժ. 59)։

Պօստատար գնացք Կարսից դուրս է գալիս ցերեկվայ 4 ժ. 57 ր. (5 ժ. 55 ր.), հասնում է Ալէքսանդրոպոլ երեկոյեան 8 ժ. 5 ր. (9 ժ. 3 ր.), Ղարաքիլիսա 11 ժ. 42 ր. (12 ժ. 40 ր.), Թիֆլիս առաւօտեան 6 ժ. 20 ր. (7 ժ. 18 ր.)։

Խառն գնացք Թիֆլիսից դուրս է գալիս ցերեկվայ 2 ժ. 15 ր. (3 ժ. 13 ր.), հասնում է Ղարաքիլիսա 9 ժ. 30 ր. (10 ժ. 28 ր.) Ալէքսանդրոպոլ գիշերվայ 1 ժ. 25 ր. (2 ժ. 23 ր.)։

Խառն գնացք Ալէքսանդրոպոլից դուրս է գալիս առաւօտեան 5 ժ. 25 ր. (6 ժ. 23 ր.), հասնում է Ղարաքիլիսա առաւօտեան 8 ժ. 35 ր. (9 ժ. 33 ր.) և Թիֆլիս ցերեկվայ 3 ժ. 37 ր. (4 ժ. 35 րոպէին)։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ԴԱՒԱԹԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հարաւէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Դաւադարեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (տիֆլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Ջիկովանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Կ. Ի. Դզելինով—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Գ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. Ռոսոմբէկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.
Ա. Ն. Ծպակովսկի—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբոյժ), վեներ. և մորթու հ.
Գ. Ա. Թարխանեանց—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.
Բ. Ա. Դաւադարեան—7½—8 ժ.

Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ս. Առվանիտակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՈՒՂՐԱՎԱՆ

յայտնում է, որ յունիսի 15-ին, ցերեկվայ ժամի 12-ին նրա ատեանում տեղի կունենայ աճուրդ կապալով տալու ջրմուղի շինութիւնը հետեւեալ պայմանով. ջրմուղը կը լինի բետոնից, կունենայ 69,50 սաժէն երկարութիւն 0,375×0,25 լայնութեամբ եւ 13,50 սաժէն երկարութիւն 0,25×0,16 լայնութեամբ. նա կանցնի Մեժեվայա փողոցի ջրմուղից դէպի Կիպիանովսկայա փողոց եւ Արխիպովսկի Նրբափողոց, գինն է 1,600 րուբլի։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են ծանօթանալ պայմանների հետ ուղրավայի շինարարական բաժնում ամեն օր ժամի 11-ից մինչեւ 2-ը։

13, 14, 15

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է, որ նրա ատեանում, յունիսի 15-ին, ցերեկվայ ժամի 12-ին, տեղի կունենայ աճուրդ կապալով տալու կեղտատար խողովակի շինութիւնը, որ պէտք է ունենայ 47½ սաժէն երկարութիւն 0,33×0,22 լայնութեամբ եւ կանցնի սուրբ-Կարապետի զառիվերով սկսած այնտեղ գտնվող խողովակից. գինն է 995 րուբլի։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են վաղօրօք ծանօթանալ պայմանների հետ ուղրավայում ամեն օր, ցերեկվայ ժամի 11-ից մինչեւ 2-ը։

(13, 14. 15) 1—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է, որ նրա ատեանում, յունիսի 15-ին ցերեկվայ ժամի 12-ին նշանակված է աճուրդ կապալով տալու կեղտատար խողովակի շինութիւնը, որ պէտք է ունենայ 122 սաժէն երկարութիւն 0,42×0,28 լայնութիւն եւ 30 սաժէն երկարութիւն 0,16×0,0 լայնութիւն, կը սկսվի Ծղնեթի փողոցից եւ կանցնի այդ փողոցով. գինն է 2900 րուբլի։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են նախօրօք պայմանների հետ ծանօթանալ ուղրավայի մէջ ամեն օր ժամի 11-ից մինչեւ 2-ը։

(13, 14, 15) 1—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է, որ նրա ատեանում 15-ին յունիսի, ցերեկվայ ժամի 12-ին տեղի կունենայ աճուրդ կապալով տալու հետեւեալը. շինել բետոնի ջրմուղ 22 սաժէն երկարութեամբ 0,42×0,28 լայնութեամբ եւ 81 սաժէն 0,25×0,16 լայնութեամբ. ջրմուղը կը սկսվի Գօնչարնայեա փողոցից եւ կանցնի Արսենալնայեա-փողոցով եւ Արխիպովսկի Նրբափողոցով. գինն է 1700 րուբլի։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են վաղօրօք պայմանների հետ ծանօթանալ Ուղրավայում ամեն օր ժամի 11-ից մինչեւ 2-ը։

2—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է, որ նրա ատեանում։ յունիսի 15-ին, ցերեկվայ ժամի 12-ին նշանակված է աճուրդ կապալով տալու կեղտատար խողովակի շինութիւնը, որ պէտք է ունենայ 122 սաժէն երկարութիւն 0,42×0,28 լայնութիւն եւ 30 սաժէն երկարութիւն 0,16×0,0 լայնութիւն, կը սկսվի Ծղնեթի փողոցից եւ կանցնի այդ փողոցով. գինն է 2900 րուբլի։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են նախօրօք պայմանների հետ ծանօթանալ ուղրավայի մէջ ամեն օր ժամի 11-ից մինչեւ 2-ը։

(13, 14, 15) 1—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է, որ նրա ատեանում 15-ին յունիսի, ցերեկվայ ժամի 12-ին տեղի կունենայ աճուրդ կապալով տալու հետեւեալը. շինել բետոնի ջրմուղ 22 սաժէն երկարութեամբ 0,42×0,28 լայնութեամբ եւ 81 սաժէն 0,25×0,16 լայնութեամբ. ջրմուղը կը սկսվի Գօնչարնայեա փողոցից եւ կանցնի Արսենալնայեա-փողոցով եւ Արխիպովսկի Նրբափողոցով. գինն է 1700 րուբլի։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են վաղօրօք պայմանների հետ ծանօթանալ Ուղրավայի շինարարական բաժնում ամեն օր ժամի 11-ից մինչեւ 2ը։

2—3

ԴՕԿՏՕՐ

ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

այս ամառ եւս ընդունում է հիւանդներին հանքային ջրերում (Պեատիգորսկ)։

Пятигорскъ, Вѣрхн. б. д. Султанъ Крымъ-Гирея. 10—10

Բանկային Գրասենեակը Ա. Փրիդոնեանի եւ ընկ.

Ապահովացնելու համար ներքին փոխառութեան վիճակախաղի տոմսերը վերցնում է ցնոր տնորինութիւն 7 րուբլի ամեն մի տոմսի համար յուլիսի 1-ի տիրաժից 1902 թ-ի, 6 րուբլի սեպտեմբերի 1-ի տիրաժից 1902 թ-ի, բացի մարկայից ամեն մէկ անդորրագրի համար. ապահովացումն վերադիր վճարով եւ հեռագրով գրասենեակը չէ ընդունում։ 1—3

Ա Զ Դ

Թէեւ մոտադիր էինք ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲՆԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՌԱՐԱՆԸ երկու առանձին հատորներով հրապարակ հանել, սակայն դիտելով որ այդ հատորները չատ ստուար պիտի լինին, որոնցից երեք դիւրատար հատորներու վերածել զայն։ Իւրաքանչիւր հատոր չուրջ 800 էջ կամ աւելի բովանդակութեամբ եւ իբր 300 կամ աւելի պատկերներով զարդարուած։ Յուլիս ամսոյն մէջ լոյս կը տեսնէ հինգերորդ պրակն որով կ'ամբողջանայ Առաջին հատորն՝ Ա. տառէն մինչեւ Ը տառը։

Կը խնդրենք մեր այն բաժանորդներէն, որոնք տակաւին չեն ընդունած չորրորդ պրակն եւ մեզ հետ յատուկ հաշիւ չունին, բարեհաճին դրկելու բաժնեգիները, յայտնելով միանգամայն իրենց որոշ հասցէն։

Բացուած է Բառարանիս Երկրորդ հատորի բաժանորդագրութիւնն ու կ'ընդունինք նաեւ նոր բաժանորդներ։ Հատորիս բաժնեգինն է 15 ֆրանկ։ Իւրաքանչիւր բաժանորդ կրնայ այդ գումարը մէկ անգամէն վճարել եւ պրակներ ընդունիլ լոյս տեսնելուն պէս եւ կամ երեքական ֆրանկ վճարելով ամէն անգամ երբ պրակ մը լոյս տեսնէ։

Նոր բաժանորդներու դիմար, որոշեալ թուով վերստին պիտի տպուի Բառարանիս Առաջին հատորը, Երկրորդ հատորի տպագրութիւնն աւարտելէ վերջ եւ կամ գուցէ առաջ։

Եթէ միջոցները ներեն, միտք ունինք Բառարանիս համար յատուկ քարտէզներ պատրաստել բազմագոյն եւ նուրբ վիմագրութեամբ. այս քարտէզները միայն Բառառանիս բաժանորդներուն պիտի տրուին, չնչին գումարի մը փոխանակութեամբ։

ՏԵՍԶՈՒԹԻՒՆ ՏՊԱԳՐԱՏԱՆ

Հասցէն՝ Imprimerie Arménienne St. Lazare VENISE (Italie).

Տպագրվում է եւ մինչեւ յուլիսի վերջը լոյս կը տեսնէ

ԼԷՕ

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑ

Մանրամասն կենսագրութիւն, լուսաբանված գրական-պատմական տեսութիւններով.

Երկուհատոր, մօտ 650 երես, բազմաթիւ (25-ից աւելի) պատկերներով (Նազարեանց եւ նրա ժամանակակիցները, „Հիւսիսափայլի" գլխաւոր աշխատակիցները, Նազարեանցի ֆակսիմիլէն, գերեզմանը, „Հիւսիսափայլի" խմբագրատունը)։

Մինչեւ տպագրութեան վերջանալը բացվում է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ։
Բաժանորդագինն է 1 ՐՈՒԲԼԻ, իսկ ճանապարհածախսով 1 ՐՈՒԲԼԻ 35 ԿՕՊԷԿ։
Լոյս տեսնելուց յետոյ գինը կը բարձրացվի։

Հատորները առանձին չեն ծախվի։ Առաջին հատորը, լոյս տեսնելուց, կուղարկվի բաժանորդներին եւ վաճառքի չի հանվի մինչեւ երկրորդ հատորի լոյս տեսնելը։

Վերադիր վճարով բաժանորդագրութիւն չէ ընդունվում։

Բաժանորդագրութիւնը ԹԻՖԼԻՍՈՒՄ ընդունվում է «Մշակի» խմբագրատանը եւ «Գուտենբերգ» գրավաճառանոցներում։ ԲԱԳԻՒՈՒՄ առանց ճանապարհածախսի բաժանորդագրութիւն ընդունվում է Սամսոն Յարութիւնեանի գրավաճառանոցում։ Միւս քաղաքներից դիմում են։

Тифлисъ. Редакція „Мшакъ". 9—10

Թիֆլիսի Կենտրոնական Գրավաճառանոցում

վաճառվում են՝

ԱՐԾՐՈՒՆԻ Վ. բժ., Թոքախտ կամ բարակացաւ—պատկերազարդ—Թիֆլիս, 1902 թ. գ. 10 կ.
« Ինֆլուէնցիա կամ նոր ցաւ, Թիֆլիս, 1902 թ. գ. 3 կ., Նոյնպէս բժշկի միւս գրքերը։
ԲՈՒԴՈՒՂԵԱՆ Ա. բժ., Ինչ է կաշու հիւանդութիւնը, 1 պատկերով, Պետերբուրգ, 1902 թ. գ. 15 կ., Նոյնպէս եւ միւս գրքերը։
ԵՍԱՅԵԱՆ Յ., Խորտակված սէր, վէպիկ, Թիֆլիս, 1902 թ. գ. 30 կ.
ԵՐԵՄԵԱՆ Հ. Ս., Կենսագրութիւն հայր Ղ. Ալիշանի, պատկերազարդ, Վենետիկ, 1802 թ. գ. 1 ր. 50 կ.
ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ Գ., գերմ. թարգմ., Ֆաուստ, Գէօթէի, հեղինակի պատկերով եւ կարեւոր ծանօթութիւններով, մաքուր տիպ, Թիֆլ. 1902 թ. գ. 2 ր.
ДАГБАШЬЯНЪ А., Полный Русско-Армянскій словарь, вып. I, Тифл. 1992 г. ц. 1 р.
Դիմել Тифлисъ, въ Центральную книжную торговлю. (п.) 4—5

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ

վաճառվում են հետեւեալ թատրոնական պիէսները՝

ՇՉԵԳԼՕՎ, Դոկտոր Թաթոս, կատակ-վոդեվիլ 1 արար. թարգմ. Ադամ Սարդարեանի, գ. 20 կ.
ՊԱՐՈՆԵԱՆ Յ., Արեւելեան ատաճարոյժ, կատակերգ. 5 արարուածով, գ. 50 կ.
ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆ Դ., Պէպո, կոմէդիա 3 արար., բ. տիպ. ուղղված, գ. 50 կ.
» Օսկան Պետրովիչն էն կինքումը, կատակերգութիւն 1 արար., գ. 30 կ.
» Գիշերվան սարը խէր է, կատակերգ. 1 արար., բ. տիպ, ուղղած։ գ. 30 կ.
» Ամուսիններ, կոմէդիա 5 արար., բ. տիպ., ուղղած, գ. 1 ր.
» Խաթաբալա, կոմէդիա 4 արարուածով, գ. 50 կ.
» Քանդած օջախ, կոմէդիա 3 արար., Թիֆլիս, գ. 50 կ.
ՍԱՐԴԱՐԵԱՆ Ադամ, Օրթաճալու քէֆը, կամ ջդրու բան է, ֆարս-վոդեվիլ, 1 արար., գ. 20 կ.
ՍՏԵՓԱՆԷ Խորէն եպիսկոպոսի թարգմ. ֆրանս. «Տարտիւֆ» Մոլիէրի կատակերգ., գ. 50 կ.
ՍՈՍԻՆ Կակինենց, Լաքթա, ֆարս-վոդեվիլ 1 արար., գ. 25 կ.
ՍՈԼՈՎԵԱՆ Յովակ., Ղոնաղլուղս մնաց, վոդեվիլ 1 արար., Մոսկվա, գ. 20 կ.
ՐՕՋՕ Ա., Մէնիկը, վոդեվիլ 1 արար., գ. 20 կ.
ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ Էմին, Սէր կամ մահ, երգ պիէս 1 արար, բ. տիպ., գ. 50 կ.
» Կուսապատճառը ես էի, կոմէդիա վոդեվիլ 2 գործ., բ. տիպ, գ. 50 կ.
» Մօդա, կոմէդիա 1 արար., բ. տիպ, գ. 50 կ.
» Խէչօի թուղը, ֆարս-վոդեվիլ 1 արար., բ. տիպ, գ. 50 կ.
» Զարք, կատերգ. 1 արար., գ. 1 ր.
» Բարեգործութեան դիմակի տակ, դրամա 5 գործ., գ. 1 ր.
» Էլ չարէս ինչ կամ երկու սիրահար, կատակերգ. 1 արար. գ. 50 կ.
» Վայրենի, կատակերգ. 1 գործ., գ. 50 կ.
» Դամոկլեան սուր, դրամա 3 արար., բ. տիպ, գ. 75 կ.
ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ Մ., Վոյ քի իմ վէչեր, ֆարս 3 պատկերով, գ. 40 կ.
» Պառաւներուն խրատ, վոդեվիլ 1 արար., գ. 50 կ.
» Ով է մեղաւոր, կատակերգ. դ. գործ., գ. 30 կ.

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ «ГУТТЕНБЕРГЪ». Г. Галустяну, Лорисъ-Меликовская ул. № 11. 2—3

Дозволено Цензурою, Тифлисъ, 13 Іюня 1902 г.

Электропечатня Груз. Издат. Т—ва, Б.-Ванкская ул.